


ՏԵՐ ԵՒ ՏՆՈՐԷՆ
 ԳՐԱՐԱՆՆԵՐ
 ՆԱՄԱՆ ԳԱՐ ՈՐ ԵՒՄ ԳՐԱՐԱՆՆԵՐ
 ՊԵՏԵ ԵՒ ՈՒՂՂԱՆ ԱՐ
 ՏՏՈՒՄԸ ԱՐՇԱԿՈՅԱՆ ԵՒ
 ՏԱՆԻՆԻ (ՓՈՍՏ ԵՒ ԵՄՔԱՆՈՒՄ)



ՔԱՏԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ
 ԵՒ ՔՐՈՒՍԱԿՐԵՍՈՒԹԻՒՆ
 ՏԱՐԵԿԱՆԻ ՈՂՁ ԴԱՏԿԵՆ 60
 ՎԵՂԱՄԱՆԱՅՍ » 35
 ՕՏԱՐ ԵՒՎՈՐՆԵՐ
 ՏԱՐԵԿԱՆԻ ԾՐԱՅԵՆ 20
 ՎԵՂԱՄԱՆԱՅՍ » 13

E. TOROSSIAN
 Direc.-propriet. du journal arménien
 ARCHALOUICE
 LE CAIRE (ÉGYPTÉ)
 Poste-restante

ԼՐԱԳԻՐ
 ԱԶԳԱՅԻՆ, ԳՐԱԿԱՆ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ

ԿԸ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻ ԶՈՐԵՔՇԱՐԹԻ ԵՒ ՇԱՔԱԹ ՕՐԵՐԸ

ՔԱՏԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ ԿԱՆԵԿ ԵՒ
 ԵՒ ՔՐՈՒՍԱԿՐԵՍՈՒԹԻՒՆ
 ԽՈՒՐԱԳՐՈՒՅԵԱՆ ՎՐԱՅ:
 ԽՈՒՐԱԳՐՈՒՅԵԱՆ ԱՂՂՈՒՄ
 ԳՐՈՒՅԻՆԻՑ ԵՅ ՂԵՆ ՕՐՈՒՐԸ:
 ԱԶԳԱՐԱՐՈՒԹԻՒՆՔ
 ԿԱՆԻՍԻԿ ՎՃԱՐՆԵՐԻ ԿՆ

ՈՎ Ե ՊԱՏԱՍԻԱՆԱՏՈՒՆ

ԱՌ Պ. Տ. Հ.

Արդարև պայտախա ըլլալու նպատակ չ'ըզնինք և ոչ ալ կ'ուզենք որ ուրիշներն մեր վրայ պայտախա աներաւ գաղափար մը տածեն: Սակայն երախտագիտական զգացողմանքը պէտք չէ որ մեր աչքերը գոցեն մեր բարեբարին թերութեանց դէմ: Ոչ ոք կրնայ ուրանալ թէ Անգղիացիներն ուրիշ բոլոր քրիստոնէայ ազգերէն աւելի մեծ գումարներ դրկեցին սփոքեւր մեր վիշտերը, և դարմանելու մեր վէճերը: և ասոր համար ազգը փութաց կրկին և կրկին, կերպ կերպ միջոցներով իր շնորհակալութիւնները յայտնել անոնց:

Բայց չ'մոռնանք թէ Անգղիացիներն և Ռուսերը միաներէն աւելի պատասխանատու էին մեզ պէտքերուն: Անգղիացիներն Ռուսերէն աւելի խղճամիտ և զգայուն ժողովուրդ մը՝ ջանացին իրենց խղճի ձայնը լսեցնել, դրամական սպեղանի դնելով մեր վէճերուն վրայ, որ արդարև անգարման չէր այսպիսի միջոցներով:

Մենք անոնցմէ չենք որ կորուրէն կը պնդեն թէ Հայկական կաթորածները սղաղակի վերագրելի են անգղիական շահամուտութեան: Խնդիրը մտտէն ուսումնասիրողները գիտեն թէ Անգղիացիք չէ թէ միայն հեղինակները չէին այս սարսափներուն, այլ անկեղծօրէն փափաքեցան անոնց առաջը աւելուել, եթէ այս բանը կարելի ըլլար այսինչ աստիճանի զոհողութեամբ:

Այն ատենուան Եւրոպական լրագիրները կարողացողները պէտք է յիշեն թէ Անգղիացիք ինչ մեծ ճիգ թափեցին համոզելու համար միտ Տէրութիւնները որ պէտքի միանան իրենց հետ նաւային ցոյց մը ընելու Պօլսոյ առջև և ստիպելու Մեծ Մարդասպանը վերջ տալ իր դիւային արարքներուն:

Այո՛, Ռուսիա չէ թէ միայն չ'հաւանեցաւ միանալ Անգղիացեաց և իտալացեաց հետ Տարտանէլի շուրթերուն մէջ, այլ անոնց այս հակա-օսմանեան շարժումներուն յայտ յանդիման հակառակեցաւ և իր այս ընթացքովը առաւելութիւններ շահեցաւ Երկրորդ պալատին մէջ: Այսու ամենայնիւ Անգղիացիները պարսաւանքէ դիմ չեն:

Արդ՝ ի՞նչ կէտի մէջ կը կայանայ անոնց յանձանքը և պատասխանատուութիւնը:

Պէտք է խոստովանիմ հոս թէ՛ այս կէտին վրայ միտքս յուսաբանուած է Արկայի Դուքսին «Մեր պատասխանատուութիւնը» անուն գրքէն:

Արկայի Դուքսը Թուրքո-Ռուս պատերազմին ժամանակ նախարար էր անգղիական Կիսանին մէջ Պ. Կլաուսթրի հետ և մասունեցաւ Պէրլինի դաշնագրութեան հաստատման գործին մէջ: Այս մեծ դիւանագէտը կը խոստովանի թէ իրենք մեծ սխալ մը գործեցին այն ժամանակ Ան-Սթեֆանոյի պայմանագիրը Պէրլինի դաշնագրութեան փոխելով, որուն հետևանք կ'ըսէ, այսօր հազարաւոր խեղճ և անմեղ հայեր կը ջարդուին: Որովհետև պէտք է յիշել թէ երբ Ռուսերը յաղթութեամբ միջև Պօլսոյ դռները հասան, Տաճիկ կառավարութիւնը ահ ու գողի մէջ ստիպուեցաւ ընդունել Ռուսիոյ բոլոր արաջարկութիւնները և ստորագրել Սան-Սթեֆանոյի պայմանագրութիւնը: Այս պայմանագրին յօդուածներէն մին, որ հայոց նկատմամբ էր, իրաւունք կուտար Զարին պաշտպանելու Սուլթանին քրիստոնէայ հպատակները՝ Տաճկաց խեղճութիւններուն դէմ: Հոս Անգղիացիք միջամտեցին և Սան-Սթեֆանոյի պայմանագիրը Պէրլինի դաշնագրութեան փոխելով և հայոց պաշտպանութեան դրօժը Ռուսիոյ ձեռքէ կորցնելով՝ դաշնագրութիւնը ստորագրող վեց պէրութիւններէն յանձնեցին:

Այս իրողութիւնը երկու արդիւնք ունեցաւ. մին սա եղաւ որ հայերը պաշտպանելու պարտականութիւնը անհատ մը առնուելով վեց տերութիւններուն մէջ բաժնեւեցաւ, և ինչպէս որ Արկայի Դուքսը հեղինակէն կ'ըսէ, «Ամենուն գործը և ոչ մէկին գործը» եղաւ:

Երկրորդ, Ռուսիա թուրքիոյ վէճ եղող քրիստոնէայ ժողովուրդներուն պաշտպան ըլլալու պատիւէն զրկուելով, խիստ զայրացաւ և այն ատեն թէ և ճնշման տակ ըլլալով բան մը չ'ըսաւ, բայց իր պատեհութեան սպասեց: Ահա իր պատեհութիւնը եկած էր Անգղիացեաց սորվեցնել իր գերազանց կարեւորութիւնը Հայաստանի մէջ և հայոց ալ դատ մը տալու անոնց Բրիտանական հակամիտութեանց համար ընդդէմ Ռուսիոյ: Այս ընթացք թէ և վատութիւն

էր, սակայն գիտնալու ենք թէ դիւանագիտական խնդիրներու մէջ վատութիւն, անպատեհութիւն, ստախօսութիւն աննշան և անիմաստ բառեր են:

Ասկից ի զատ Ռուսիա ընէր իր աննշանական նկատումները ճիշդ այն ժամանակ միջամտելու Հայկական խնդրոյն և պատասխանելու սաղայէլեան ծիծաղով մը Սոլդաթիի դիմումներուն, «Թող Կրիստանական զրահաւորները դան Հայաստանի լեռներուն վրայ և պաշտպանեն Չեր որդեգրած ժողովուրդը»:

Ահա այս էր կ'ըսէ Արկայի Դուքսը մեր սխալմունքը. — ստանձնեցինք այսպիսի պարտականութիւն մը, զոր կատարելու անկարող ըլլալին նախատեսած ըլլալու էինք: Եւ արդեօք այս նոյն յանցանքը չէ՞ զոր Անգղիացիք գործեցին յանդարտաստեղ պատերազմի դաշար նետուելով Հարաւային Աֆրիկէի մէջ:

Պէտք չէ Անգղիացիները հայոց թըշնամի նկատել անոնց գործած մէկ սխալովը հարիւր հազարներով հայեր ջարդուած ըլլալուն համար: Իրենց սխալովը թափուած այնչափ Հայկական արեան պատիժը կը կրեն անոնք նոյն սխալը գործելով և անոր հետևանք հայաբաւոր Անգղիացիներու արևը թափելով:

Վստահ ըլլանք թէ Հայկական խնդրոյն առթիւ իրենց գործած սխալին վրայ այնչափ ցաւ զգացին, որչափ որ կ'զգան այժմ թրանսլալի պատերազմին առթիւ: Այս էլ կու պարտաւաներուն տակ ալ գործուած սխալին հիմը Անգղիացեաց «չափազանցեալ անձնապատանութիւն» է՝ որ «այուջ յանդրգնութեան» ձեռ առնելով անոնց «տկար կողմը» մատնվցնել կ'ընէ, ինչպէս որ նախորդ յօդուածովս ցոյց տուած էի:

Սակայն ինչպէս որ ամէն անհատ, նոյնպէս ամէն ազգ ունի ինքնուրոյն թերութիւններ, և մենք Անգղիացեաց տկար կողմը ցոյց տալով անոնց մեծ «առաւարկութիւնները և յատկութիւնները» չենք մոռնար. ընդհակառակը, կառարկեցաւ համաժողով ենք թէ Անգղիացիները «մեծ ազգ» մը ըլլալու համար իրաւաւոր կը վայելեն:

Մենք ալ մաղթենք որ հայերն անգղիական բնաւորութիւնը իւրացնեն, ի բաց առեալ սակայն անոնց «թերութիւնները» և ատելի նկարագիրը: Մ. Յ. Գ.

ԲԱՑ ՆԱՄԱԿ

Ա.Ռ. Պ. Գ. Պ.

Սիրտ մը խոստովանութիւնով մը կը թեթեւանայ, ինչպէս կը թեթեւանայ վիշտ մը պատմութիւնով :

Եւ արդէն յաճախակի հրաւերէք չգոհացած ըլլալուդ համար չ'զանգատիս, կարգն է հիմայ խոստովանիլ այն պատճառները որք յոչկամս այնքան երկարեցան :

Գրելը պէտք է գիտնաս թէ կը համեմի աւելի ա՛յն ատեն, երբ ընտրութեամբ ու իմաստով օգտակար ըլլայ նախ ընկերութեան, ընդհանրութեան՝ եւ աւելի մօտ կերպով մը իր բարեկամին :

Բայց երբ մի մարդ՝ նոյն իսկ ըլլայ դժբաղդներու կարգէն, որ իր ամբողջ մտածումի եւ ուսումնասիրութեան կարողութիւնը գորացուցած ըլլայ մի ուրիշէ, եւ իր սրտին ամբողջ ուսկանը ձգած դէպ ի անյաղթելին, անխուսափելին կամ որ աւելի դժուարագոյնն է նետած ըլլայ իջգրիւք ճարտակային ձգտումներուն սիրոյ յախուսն բաժնին մէջ, որ բարբոթել ըլլայ թեթեւ հոգեկան անյայտ ու գաղտագողի հրահրութեամբ ալիւս այ՛ մտորէն ո՛չինչ կարող էք սպասել :

Նա արդէն իր կեանքի վիճակած ամբարձու հանգոյցին գերադրական կապեալն է, ինչ պիտի լինի ուրեմն նորա արտադրութիւնը, ի հարկէ սխալ մը կամ անուղիղ քայլ մը :

Ահա ես այդ սխալի երկիւղն ունէի միշտ, որք այս անգամ զանց կ'ընեմ գիտնալով որ գոնէ դուք առաջին ներողամտը կը լինէք :

Այո՛, այո՛, բարեկամդ սխալեցաւ, ձգեց որ միտն ու մտադրական հորիզոնի մը ամպամած երկնքի պղտոր հոտանքը քչէ ասնի իր մտածումի գովելի իղձերը, ինքը պիտի լինէր կեանքի գոց ոչ գծողակ ճանապարհի մի բաժնին առաջնորդող ռահանորդը, ուստի կ'երեւէին արդէն հաւասար իրաւունքն ու հաւասար պարտականութիւնը սակայն բարեկամդ իր ձեռնարկի դժուարութեանի մէջ գահավիժելու, եւ իր ստանձնած արբար պահանջումի անխնայ զոհեալը եղաւ, բայց թէ կորո՛յն կամ մտացա՛ւթ է ի՛նչ է կեանքի կոչումը, երբէք կեանքը ճնտթեան պահանջն է, քանի բնութիւնը դադարած չէ կեանքը գոյութիւն ունի եւ քանի որ դեռ կեանք կայ նա պարտք մը չունի :

Կոխ ու պայքար է կեանքի պարտքն ու կոչումը որոցմէ կը ծնի մարդկային ամբողջ հրմտութիւնն ու կարողութիւնը, ատենք կրկին մարդկային օգտակարութեանը գործածելի միջնորդներ են, որոցմով յառաջ կուգայ խաղաղ կեանքը, բարօրութիւնը եւ գոհունակութիւնը վիճակի մէջ :

Սակայն թէ ի՛նչ են ձախողութեանը, վիշտը եւ զանազան բազմադիմի պատահարները, անաատնց խորը պէտք չէ թափանցել, Դոքա մարդու խմորին անաղիւ կարողութեան փոքրութիւններն են, որոց մեծ մարմնացումը կը կազմէ լոկ նախանձը, չար նախանձը Սաղայէլի տիեզերասփիւռ ժպիտն է դա, որուն հողմուռոյց ժանիքներուն անյարգ գործիքը եղող մարդը յաճախ իր աղտոտ չրթունքներովը կ'ապականէ մինչեւ իսկ համբոյքի սրբութիւնը, միշտ խեղճ մը, թշուառ մը վերվայր տապալելու համար :

Այսպէս անա քանի որ նախանձը, չար նախանձը կը պղտորէ կենաց բարօրութիւնը, քանի որ մարդիկ չարին ենթակայ սին բնագոյով մը կ'աւրեն կ'աւազակեն կեանքի այգին ու անոր կանխանաս պողի գեղեցիկ ողկոյզը, մեղքը կը մեծնայ, զրկումը կը բազմապատկի որոյ բարդիբարդ յառաջխաղացումին մէջ տառապելոյց ձմիները կը շատնան ու տանջուողներու աղեկտուր աղաղակները սրտերը կը թնդացնեն, որոց ամենայնեանքն մէջ կ'աղաչեմ, մի՛ լսէք իմ ձայնս :

Մի՛ թողուք որ անգամ մը զթոտ ու կարեկից ակնարկով մը հային յիս ու գէթ միանգամ ընդ միշտ ճանչնալ կարենան թէ որպիսի մի անկեալ եմ ես : Չեն տեսներ ու չպիտի տեսնեն, մարդիկ կոյր են, գործուած մարդկային արեւնաթաթաւ ձեռքին քսումները ոճրին դէմ, կո՛յր, գրոջմուտած ուխտի մը յաւէտ կենդանի ներշնչումովը վշտաչար տառապելոյց դէմ, ու եթէ ինչայ գոհեալը անմեղ քառութեան մեղաւոր ապաշխարանքով . . .

աւա՛ղ . . . մարդկային կեղծ արցունքը կը հոսի, յայնժամ կեղծ հոգին ու կեղծ բնադէն կը զարթնուի եւ ուր ուրեմն հոգւոյ ազնուութիւնը կ'իջնայ գառապարտումի սառնաշունչը գրոջմին տակ :

Արդարեւ մարդիկ չար են ու իրենց միջնորդութեամբ չարութեամբ ողորդու, շատ քիչ են բարիները սակայն չարութիւնը դասաւորելով, համեմատելով ամենքն ալ կը սրբութիւն, ու հաւատացէ՛ք, հրեշտակային սրբութիւնով մը կը պանծան :

Բայց թէ կը սխալի՞, կը ստէ՞ իսկութիւնը, բնաւ, իրական դոյնը, կեղծիքը, եղծանելին կեանքի փորձաքարին վրայ կը յայտնուի ու չարակամ իւր գլուխն առած կը պարկակուի ամբոյ ու նախատինքի գրկին մէջ :

Սակայն երնէկ թէ մարդս իւր գառապարտին մէջ մեղքը ընդունել ու գործուած մեղաց պղտոր թանձրութեանը մէջ ամեն բան իրեն եղած համարի :

Ա՛հ, այն ատեն զրկելոց բազոր կը փոխուէր գուցէ եւ իմ վճիռն ալ, որուն վրայ անգամ մը եւս կրնայի հանդիպել իրեն այնպէս՝ որպէս հանդիպեցայ անժամանակ աղօթատեղւոյն նեղ շուկային մէջ, հպարտ ըլլելէ, բարի ու գեղեցիկ :

Ա՛հ, ինքը, ինքը, միշտ ինքը . . . հոն տունին մօտ, իր արեգակնային ուղղաձիգ ճառագայթները երկնայաք ասուպի պէս միարձեցան իմ հոգեւոր մէջ ու թուեցաւ ինձ թէ մեծ ջախ մը լուսասփիւռ գողացումներովը դէպ ի կէտ մը, դէպ ի բաղձանք մը կ'առաջնորդուի :

Հոն՝ իր շիկնոտ քաջութեանը յանձնապատան վստահութեանը տեղի մեղրածոր չրթունքներէն սրտազգորդ իր մէն մի բարեբը, երբեմն հատ մը եւ երբեմն հագիւ աւելին, որպէս մի թուեցիկ աղաւնեակ, տեղատուութեան մը գոհանքի տերեւովը կ'ընեալ կ'անպահովէի ինձ այն բաղձալի տիրապետութիւնը յորմէ գոհանումն համար անհնար կը լինէր ինձ պահ մը կանգ չարչարել եւ անոր սրբաշնորհ պատկերին յափտակիչ նմայքին առջեւ չ'սքանչանալ :

Իսկ այժմ, ա՛հ, նոյնը, միշտ նոյնը . . . Բեզ, քեզ իմ հոգւոյն ճառագայթը ա՛յն անի ու տիեզերաստան Սասունի ճամբուն վրայ հայեցար ինձի, միտ հայեց, քեզմով կը ջն եմ, կ'ապրիմ ու պիտի ապրիմ . . .

Եւ եթէ ժամն նչէ ու անաւոր վայրկեանը գնա՞ գեղեցիկ հոգւոյդ անմահ ժոթովը ձայն առուր ո՛հ, յիշատակդ հետաւ առած ես քոյն պտեն կը մեռնիմ . . .

Գահիրէ 12 Մարտ 1900 ԱՍՏՂԻԿ

ՆՃԱՆԱԽՕՍՈՒԹԻՒՆ

Ճիպուտի իւր և Հարարի նշանաւոր հայ վաճառական Ս. Թէրզեան եղբայրներէ մին ՏԻԱՐ ՄԱՄԱՍ ԹԷՐԶԵԱՆ ի՛նչ որ վերջերս քաղաքս ժամանած էր, Կիրակի օր տեղի ունեցաւ նշանախօսութեան արարողութիւնը ընդ Համեստ. ՕՐ. ԱՐԱՔՍԻ Գ. ՄԻՐԻՃՍԵՆՆԱՆԻ, ի ներկայութիւն երկու կողմանց աղգականաց և բարեկամաց :

Արժանապատիւ Տէր Եղիկ Բահանայ Պալուսի կը նախադասէր նշանախօսութեան հանդիսին :

ՏԻԱՐ ՄԱՄԱՍ ԹԷՐԶԵԱՆ, գիշերօթիկ վարժարանի մը յանձնելու համար իրեն հետ բերած եղբորդին և քեռորդիքը տեղաւորելով, այսօր կը մեկնի ի Ճիպուտի քիչ ատենէն վերադառնալու և ժամանակ մը իր արդէն հետեւած օտար լեզուները կատարելագործելու նպատակով :

Մեր անկեղծ շնորհաւորութիւնները երկու սիրակցորդ խօսեցեալներուն :

ԹՐԱՆՍԿԱԿԱԼ

Լորս Ռօպրտսի եւ զօրավար Բրոնտի ճեսակցութիւնը :

Եղբոր Լորտ Ռօպրտս Զօրավար Բրոնտի, աւախնց պայմանի անձնատուր ըլլալը

գեկուցանող նամակը ստացաւ, զօրավար Բրոնտի մանր զրկեց :

Առաւօտուն ժամը 7 ի ատենները ձիաւորներու փոքրիկ խումբ մը նշմարեց, որ բլուրէն կ'անցնէին : Զիաւորներու մէկ մասն իր քայլերը դէպ ի Անգղիացի Զօրավարը կ'ուղղէր, Բրոնտի համնիլը ծանոթանելու համար :

Լորտ Ռօպրտս կը շրջադայէր այն կառքին առջև, որ միեւնոյն ժամանակ նշմարանի տեղ կը ծառայէր իրեն նաև Սիֆորթ Հայլանտէրներէն խումբ մը զրկեց :

Հեծելագործերը հետզհետէ կը մտանային և Բրոնտի ման զօրավարին ալ կողմը կը տեսնուէր ծերունի մը, որ լայնեղ թաղեայ գլխարկ դրած, թանձր կտաւէ կարծ վերարկու մը, ծոլորակիմ բանթալոն եւ դեղին կաշիէ ոսնաման մը հագած էր :

Բրոնտ անաւոր էր, դէմքը սեւցած էր խորշակէն, գանգուր մազերը տարածուած էին ուսին վրայ արծաթի թեւերու պէս :

Բրոնտի զէմքը բացարձակապէս անայլալ էր, այնպէս որ տխրութեան հետք մը անգամ չէր նշմարուէր հոն :

Լորտ Ռօպրտս եւ իւր սպայակոյտը ոտքի վրայ կեցած, կը լսէին զօրավար Բրոնտի մանի խօսքերը, որ զօրավար Բրոնտը Լորտ Ռօպրտսի վրէժներ կայնայնէն ըսելով, « Ահա զօրավար Բրոնտը, Պարոն » :

Այս խօսքին վրայ հրամանատար Բրոնտ կը բարեւէ զինուորականը :

Լորտ Ռօպրտս փոխադարձաբար կը բարեւէ զայն եւ ըսող հեծելագործներ իրենց ձիերէն վար կիշնան : Այն ատեն Լորտ Ռօպրտս յանաշնալով կը սեղմէ Պօէր հրամանատարին ձեռքը ըսելով :

— Պարոն, « շատ քաջութեամբ պայտապանեցիք ինքզինքնդ » :

Առաջին բառէն, անդիացի զօրավարը Պօէր հրամանատարի համարձակին կ'արժանանայ :

Յետոյ Լորտ Ռօպրտս ազնուաբար ճաշի կը հրաւիրէ ծեր դիւցաղներ :

ՏԵՂԱԿԱՆ ԼՈՒՐԵՐ

ԿՈՒՐՍ. — Բանտարկելոյ ընդհանուր Տնօրէն Գօրախաչա, թուրք մէջ տեղի ունեցած ապստամբութեան վերաբերեալ քննութիւնները աւարտած է :

Բանտարկեալները երէք առաջարկ ներկայացուցեր են :

1. Յուօրեայ աշխատութեան ժամերը նուազեցնել, այսինքն օրական աշխատութեան ժամերը պատի վերածել :

2. Բանտարկելոց տրուած սնունդը կանոնաւորել :

3. Այն օր միևնոյն տեղը աշխատելու իրաւունք տալ :

Գօրա փաչա այս մասին ո՛ր է որոշում տուած չէ դեռ և առաջադրած է մի առ մի հարցաքննել բանտարկեալներն, այնտեղ տիրող խանգարմանց բուն պատճառը գրտնելու համար :

ՍՆԱՐԳՈՒՆՔ ՄԵՆ. — Անցեալ օր աւարտեցաւ հարցաքննութիւնը ոստիկաններու յիմնապետի մը, որ ի մէկկալէ վէճի մը ընթացքին մէջ Անգղիոյ թագուհւոյն անարգանքներ ըրած էր :

Դ Ի Բ Ե Ը

ԳՈՒՌՁ ԱԿՈՆ

Քինթը թամփած ակնացով,
Գլխին փեղոյը փրսիաթ,
Հինգ թէ վեց թեւ միրուսով,

Կ'ըսես հի՛մա կը թուի
Կարծես ճուէն նոր ելած
Հաւու ճուռ է աշունա
Գետին ընաւ չի կոխած:

Թուայիքն է magnifique!
Հագուստ կապուստ à la grand!
Ոտից ց'գլուխ très chique!
Ման գալու տեղն է Պորսուս:

Ոտքը՝ փառքախ սփարիկ,
Ձեռքն՝ էյիսիվանը սեղմած,
Իր հոխարսաւ նայուածքին
... զեք գերի են գարձած:

Երբ պոռթկարեմ կը փրթի
Հագուած չիքուկ ու փաքուկ,
Կ'ըսես հի՛մա կը կոտորի
Մէջքն ու իրանը փափուկ:

Պարտքը պողպատէն թափի,
Մութ սոխախն է ճաշարան...
Բա՛յց սուկեճոյլ խառնելով
Միշտ կը փորէ իր ակուան:

Buffèque կերայ, omelette!
Jambon, cotelette, salata!
Restaurant, հէ՛, ի՛նչ complete!
Սո՛ւտ է, խօսքիս հաւատա՛:

Traviata. Grand Via
Նա կը սուլէ opérette!
Առատունէ իրկուռն
Ման գայ à la bissiclette:

Երբ քեզ տեսնէ՞ս, o՞ bonjour!
Bonjour! ami! ընտո՛ր ես...
Comment ça va? բարե՛կամ,
Գանի օր է սա ու՛ր ես...:

Պորսուսի champagne կայ աղւո՛րջ
Allons, խաղա՛ս billardo,
Գրպանիդ մէջ, հաւատ՛ որ,
Կուտ մը չունիս, խե՛ղճ Ակօ...:

ՊԱՊԻԿ ԾԳՆԱԻՈՐ
Աղեքսան ըրա՛ս

Յիսնայեալը աստիճանազուրկ հուշակուեցաւ և պարզ ոստիկան դարձաւ, և աստիճանով իրմէ անմիջապէս վեր եղողն ալ նոյնպէս իւր աստիճանը կորսնցնելով յիսնայեալի վերածուեցաւ:

ՊԱՇՏՆԱԿԱՆ ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆ (1)

Ա.ԶԳ. ԳԱԻԱՌ. ՎԱՐՉՈՒԹԵԱՆ ՔԱՂ. ԺՈՂՈՎՈՅ

Ազգային Գնահատման Բաղաբաղկան Ժողովը՝ նկատելով որ Պատ. Ազգապախնամ Ընկերութեան Մայր Դիւանի անդամաց արարքներուն դէմ գանգատներ ներկայացուած են իրեն՝ Գործադիր Ժողովոյ երկու անդամներէն և ուրիշներէ:

Նկատելով որ այդ գանգատներուն արժէքն անձամբ գնահատելու և ըստ այնմ անօրինակու համար ժողովը արժան դատեց ընկերութեան Ընդհ. Ժողովոյ ատենագրութեան տուժարն անձամբ տեսնել և առ այս երկու անգամ (10 և 30 օրնով, 1900) պաշտօնապէս հրաւեր ուղղեց նոյն ընկերութեան Ատենագրու Մեծ. Ս. Ֆէլէկեան Է.Ք.ին,

Նկատելով որ Ատենագրու Է.Ք.ն ցարդ ո եւ է պատասխան չտուաւ և կը լուրի թէ հրատարակէ, Նկատելով որ ընկերութեան գործերու արդի վիճակին շարունակութիւնը կը վնասէ ընկերութեան բարի նպատակին որ ամենայնի արժանի է պաշտպանութեան և քաջաբերութեան,

Նկատելով որ 23 ընկերք հանրագրութեամբ մը Ընդհ. Ժողովոյ անմիջական գումարումը կը խնդրեն ընդ նախագծութեամբ Արժ. (Քահանայի մը, ընտրելու համար նոր Մայր Դիւանը և Գործադիր Ժողով մը 3

Ժողովս յետ խորհրդակցութեան որոշեց որ Արժ. Տէր Եզնիկ քահանայի նախագահութեամբ, մեր ի մտայ որոշելիք օրն(2) ի նիստ գումարի ընկերութեան Ընդհ. Ժողովը, զինն յարուցեալ բոլոր խնդիրներն և արժան գատածը, ի գործ դնէ ըստ արամագրութեանց ընկերութեան կանոնադրին:

Չայս ծանուցանելով ընկերութեան Պատ. անդամաց և Գահիրէի հայ Ժողովոյ ղեկին ի գիտութիւն Մնամ Ազգօթարար

Առաջն. Փոխ-Տեղապահ հայոց Եգիպտոսի Փետր. 21/5 մարտ 1900

(1) Սոյն պաշտօնական յայտարարութիւնն Առաջնորդարանի կողմէ մեզ հաղորդուած չէ, այլ Ազգապախնամի Գործադիր Ժողովոյ բողոքածրիկ անդամներէն Տիար Յակոբ Քիրքճեանն՝ նկատելով որ կիկզեցյալ ուղղուող կախած յայտարարութիւնը և ոչ մէկ տուրն սպասուած արդիւնք արտագրած է, մասնաւոր նամակի մը մէջ ներկայելով զայս՝ անոր նրատարակութիւնը կը խնդրէ մեզմէ, զոր ամենայն սիրով կը կատարենք:

Մեզ Գնմանը ուրախանիք է տեսնել ոչ Ազգ. Առաջնորդարանը թերթի մը օգտակարութիւնը և գոյութիւնը ցարդ կ'ուրանայ, մինչդեռ ժողովուրդի հարազատ զաւակները ընդհանրէն զանոս կարեւորութիւնը: Ասիկայ բարոյական ասպակ մ'է Առաջնորդարանին ուղղուած, եթէ սակայն այսպիսի անպաշտօնական արժէքը զգալ եւ ըմբռնել ուզեն:

(2) Սցսօր Տիար Քիրքճեանի կողմէ ստացանք ուրիշ յայտարարութիւն մը կ.ս. որ կը վերաբերի կիրակի օրուան ժողովի գումարման և շարաթ օրուան թեւով պիտի հրատարակուի:

Հ Ե Ռ Ա Գ Ի Ր

Լոնտոն, 9 Մարտ

Լորտ Ռօպրթս կը հեռագրէ այն առաւուտ « Գրիւկէր և Մթէյն Դի պատերազմին ներկայ ին և կարեղի եղածին չափ շանք չըլին Պօէրները վերածողութիւն: Խորտակումը կատարեալ էր: Պօէրները Բրիտանական թնդանօթներուն ինչպէս նաեւ ձիաւորներուն սոսկալի զորութեան դիմագրելու անկարող էին:

Լոնտոն, 9 Մարտ

Ռիւթէր կը տեղեկանայ թէ Անգղիական զօրագունդերը Քէլթաունէն հիւսիս արեւմտեան գաղթականութեան ապստամբ երկիրներուն վրայ կը յարձակին:

— Լէյտանիթ հի ծովային վաշտը Սիւս մնաթովի ճամբով Տիւուպոն կը հասնի ճարպիկ հնարքներով:

— Սըր. Փ. Վիթէ Բիէթերմարիցալուրի գնաց:

ԱՆԳԼԻԱՅԻ ԶԻՆՈՐՆԵՐՈՒ ՆԱՄԱԿՆԵՐԸ ԲԱՂՈՒԱԾ

Հետեւեալները անգլիացի երկու զինւորներու նամակներն են, որոնց մին նշանաւոր է ծիծաղաշարժութեամբ՝ իսկ երկրորդը իր ողբերգական տխրամածութեամբ: Հոս նիզակաւորներու գունդի տեղակալ մըն է՝ օր գերի է Բրէթորիայի մէջ:

Եթէ գիտնայիք սիրելի՛ Քէյթս, որչափ կը ձանձրանամ, հաւատա՛ որ ծրս կ'անցնեմ պատահանիս առջևէն գնդապետիս պարտէզին մէջ յաթ լուպը գիտեմ՝ իրաւ որ շատ զուարճայի է, կ'երգնում, սիրական՝ Քէյթս, որ եթէ գուն տեսնայիք խնդալէզ կը մարէիք: Խեղճ մարդը ինչ ընելը չգիտեր, նմա չապիկին թեղանիքները ջուրին մէջ թաթխել կ'սկսէ եւ անոնց ազատ մը ճերմկապէն ետքը ամբողջ շապիկը ջուրին մէջ կը թաթխէ: Մէկ մըն ալ կը նայիս որ թեզանիքին մէկը գետինը կը քուրի եւ կ'աղաղտի, գնդապետս կը կատողի կը մոլտկախի կը հայհոյէ եւ վերջապէս ճախանատած, օճաղը ջուրին մէջ կը նետէ և ջուրը դուրս ցայտելով վրան գլուխը թաց խխու՛մ կըլլայ: Ես ըսեմնէ, ճաջը՝ Քէյթս, խնդալէս կը ճաթիմ, ի՛նչ ընեմ բան գործ չ'ունիմ: Մեր զինւորները ամենայն սիրով իրենց գնդապետին գործը կը տեսնան բայց նոքրները քող չեն ցատք սրով նետու ըստ իրենց նոր պատասխանած կազմակերպի ամէն ինչ տարակալ, սպայ թէ զինուոր պարտաւոր է իր գործը ինքն իր ձեռքով տեսնել:

— Ամեն նամակներն ալ մարդ չեն ժրպտեցներ: այնպիսիներ կան՝ որոնք իրենց թախծալից պարտութեամբ մարդու գլխութեան արցունքներ թափել կուտան, այն-

Լ Ա Մ Ի Զ ՈՒ Ա Լ Լ Ա Յ Յ

Կ Ե Ն Ա Ց Ա Պ Ա Հ Ո Վ Ա Գ Ր Ա Կ Ա Ն Ը Ն Կ Ե Ր ՈՒ Թ Ի Ի Ն

ԱՃԵԱՐՅԻ ԱՍԵՆԵՆ ՀԱՐՈՒՍԸ ԵՒ ԿԱՐԵՒՈՐԸ

ԵՐԱՇԽԱՒՈՐԵԱԼ ԴՐԱՍԱԳԼՈՒԻՄ 1 ՄԻԼԻԱՐ 437 ՄԻԼԻՈՆ

Ապահովագրեալներուն կը բաժնէ ամենէն աւելի շահաբաժինները:

Ապահովագրեալներուն արդէն վճարած է կամ ի նպաստ իրենց գումարած է 3 ՄԻԼԻՈՐ 480 ՄԻԼԻՈՆ որ գրեթէ աշխարհի ուրիշ որ Է ընկերութենէ մէկ միլիար աւելի է:

Ս. ԼԷՈՆԱՐ ընդհանուր ներկայացուցիչ ի Գահիրէ:

Աշխարհի մէջ գտնուող ուրիշ օր և է ընկերութենէն աւելի երաշխաւորութիւններ, ընդարձակ գործառնութիւններ և հրապարակի վրայ աւելի ապահովագրութիւններ ունի և աւելի ապահովագրին կը գանձէ:

ԱԼԷԻՍԻՍ ԼԱՎԻՉՈՆ գլխաւոր գործ. յԱղէքսանգրիա:

